

Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԸ

ՀՀ 'ԻԱԱ պրեզիդենտ. ակադեմիկոս Ֆ. Տ. ՍԱՐԳՍՅԱՆ,

Այս տարի սեպտեմբերին լրացավ աշխարհահռչակ գիտնական, հայ ժողովրդի մեծագույն զավակներից մեկի՝ Վիկտոր Համազասպի Համբարձումյանի ծննդյան 90-ամյակը: Աշխարհի գիտական հասարակայնության ու մեր ժողովրդի կամքին համապատասխան և օժանդակությամբ ՀՀ ԳԱԱ-ն ՀՀ կառավարության օգնությամբ ձեռնարկել է մի շարք միջոցառումներ մեծ գիտնականի ու հայրենասերի հիշատակը հավերժացնելու համար: Զծավալվելով այստեղ այդ ինքնընտանիքի հասկանալի և անհրաժեշտ միջոցառումների մասին, ես, սակայն, իմ պարտքն եմ համարում համառոտակիորեն կանգ առնել մեր սիրելի Վիկտոր Համազասպովիչի կյանքի ու գիտական, հասարակական, քաղաքական գործունեության վրա:

Վիկտոր Համազասպի Համբարձումյանը ծնվել է 1908 թ. սեպտեբերի 18-ին, Թիֆլիսում՝ տոհմիկ մտավորականի ընտանիքում: Դեռ պատանեկան տարիներին իր արտակարգ ընդունակություններով գրավել է մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ուշադրությունը, որը պատվիրել է հատուկ հոդվածներով ցուցաբերել մեծատաղանդ պատանու նկատմամբ:

1924 թ. 16-ամյա Համբարձումյանն ընդունվում է Լենինգրադի համալսարանը: Այստեղ նա սկսեց զբաղվել աստղաֆիզիկայի տեսությամբ: Նա սուաջինն էր, որ դասավանդում էր այդ առարկան (հետագայում լույս տեսավ նրա «Տեսական աստղաֆիզիկա գիրքը»):

1928 թ., համալսարանն ավարտելուց հետո, Վ. Հ. Համբարձումյանն ընդունվում է Պոլկովոյի աստղադիտարանի ասպիրանտուրան՝ հայտնի աստղաֆիզիկոս Ա. Ա. Բելոպոլսկու մոտ: Սերը և խոր հարգանքը Բելոպոլսկու նկատմամբ, որպես մարդու և գիտնականի, Վ. Համբարձումյանը պահպանում է մինչև իր կյանքի վերջը: Բավական է ասել, որ բոլոր այս տարիների ընթացքում Բելոպոլսկու աստղադիտարանի նրա առանձնասենյակի պատին փակցված է եղել Բելոպոլսկու նկարը:

1939 թ. Վ. Համբարձումյանը եղել է Լենինգրադի համալսարանի աստղաֆիզիկայի առաջին ամբիոնի վարիչը, նույն թվականին՝ համալսարանի աստղադիտարանի տնօրենը, 1941 թ.՝ պրոֆեսորը:

1943 թ. Վ. Համբարձումյանը տեղափոխվում է Հայաստան: Նա Հայաստանի Գյուտենբերգի Ակադեմիայի հիմնադիր անդամներից է և առաջին փոխպրեզիդենտը: 1947 թ.՝ ալիյի քան 46 տարի, նա ակադեմիայի անփոփոխ պրեզիդենտն է, Երևանի համալսարանի աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչը, 1993 թ.՝ ակադեմիայի պատվավոր պրեզիդենտը:

Վիկտոր Համբարձումյանի անձնական նախաձեռնությամբ 1946 թ. հիմնադրվեց Բյուրականի աստղադիտարանը, որը նրա ղեկավարությամբ ու նրա տաղանդի շնորհիվ կանխորոշելի XX դարի 2-րդ կեսի աստղաֆիզիկայի զարգացման հիմնական ուղղությունները:

Տեսական աստղաֆիզիկայի բնագավառում Համբարձումյանի աշխատանքների զաղաթնակետը եղավ պոտոր միջավայրում լույսի ցրման նոր սեսությունների ստեղծումը (ինվարիանտության սկզբունքը), որը համարվում է գիտական մտքի զուգորթոցներից մեկը: Այս աշխատանքի համար 1943 թ. նա ստացավ իր առաջին պետական մրցանակը:

1947 թ. ակադեմիկոս Համբարձումյանը հայտնագործեց նոր տիպի աստղային համակարգեր, որոնց անվանեց աստղասփյուռներ: Վերջիններսու բացահայտումը որպես աստղագոյացման օջախներ, հիմք ծառայեց լուծելու աստ-

ղային կոսմոգոնիայի մի շարք սկզբունքային պրոբլեմներ: Այդ հայտնագործությունն արժանացավ պետական մրցանակի: 1950-ական թթ. նա հայտնագործեց գալակտիկաների կենտրոնական խտացումների՝ գալակտիկաների կոլիզների ակտիվությունը, որը հարուցում է հսկայական մասշտաբների անկայուն երևույթներ, մասնավորապես՝ վիթխարի պայթյուններ, նյութի մեծ զանգվածների արտավիժումներ և այլն:

Քիտոլոգիան զարգացման գործում մեծ նշանակություն ունեցան նաև նրա առաջադրած գիտական վարկածները: Մասնավորապես նշանակալից էր առաջադրած նախաստղերի վարկածը:



Ինչպես հատուկ է խոշորագույն գիտնականներին, որոնք ունեն հետաքրքրությունների անհամեմատ լայն շրջանակ, նա իր մասնագիտական բնագավառներին զուգընթաց մշակել է նաև բնագիտության, փիլիսոփայության մի շարք առանցքային հարցեր: Նշենք միայն, որ հայ տիեզերագետի դիտական նվաճումները գնահատվել են ըստ արժանվույն և դասել նրան համաշխարհային աստղագիտության մեծագույն հեղինակությունների շարքը: Մասնավորապես իր երկարամյա գիտական գործունեությունը հզոր ազդեցություն է թողել ոչ միայն աստղագիտության, այլև տեսական և մաթեմատիկական ֆիզիկայի զարգացման վրա: Համբարձումյանի հիմնարար աշխատությունների շնորհիվ ստեղծվեց մաթեմատիկական ֆիզիկայի մի ամբողջ ճյուղ, որն ունի ինչպես տեսական, այնպես էլ կիրառական փայլուն հեռանկարներ:

Հին և ճշմարիտ խոսք է՝ վարպետ չէ նա, ով աշակերտներ չի պատրաստում, հետևորդներ չի ունենում:

Վիկտոր Համբարձումյանն իր ասպարեզում այն վարպետն է, որը (ենինգրագրում (Պետերբուրգում) և Բյուրականում ստեղծել է գիտական դպրոցներ:

որոնք աչքի ընկնող դեր են խաղացել աստղագիտության տարբեր ասպարեզներում:

XX դարի գիտության մեջ Վ. Համբարձումյանի հիմնարար աշխատանքների գնահատություն հանդիսացավ աշխարհի 24 գիտությունների ակադեմիաների անդամ ընտրվելու: Նա մեկն էր համաշխարհային ճանաչում ստացած այն գիտնականներից, որը միաժամանակ հանդիսանում է գիտությունների խոշորագույն հինգ ակադեմիաների անդամ՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իտալիայի, Անգլիայի: Նա եղել է միջազգային աստղագիտական միության պրեզիդենտ (1963 թ.), երկու անգամ, որը եզակի դեպք է, ընտրվել է Գիտական միությունների միջազգային խորհրդի պրեզիդենտ (1968—1972 թթ.): Նրա թիկունքը վեց անգամ ծածկվել է աշխարհի հայտնի համալսարաններին՝ Սորբոնի (Ֆրանսիա), Կամբերայի (Ավստրալիա), Լա-Պլատայի (Արգենտինա), Լյեծի (Բելգիա), Պրագայի (Չեխոսլովակիա), Տորոնտոյի (Լեհաստան) պատվավոր դոկտորի թիկնոցներով: Նա ստացել է նախկին ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի բարձրագույն պարգևները՝ Լոմոնոսովի և Վալիլովի անվան ոսկե մեդալներ, ԳԳՀ-ի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Արգենտինայի գիտությունների ակադեմիաների ոսկե մեդալներ և այլն:

Ակադեմիկոս Վ. Համբարձումյանը սիրում էր իր ազգը, իր ժողովրդին, իր հայրենիքը: 1943 թ. գալով Հայաստան, նա լծվեց Հայաստանում գիտության կադմակեբրայման տրնաջան գործին:

Անհրաժեշտ էր գիտահետազոտական աշխատանքներ տանել գիտության մեջ առաջացած նորագույն բնագավառներում, ապահովել զարգացման ժամանակակից բարձր մակարդակը: Այս նշանակալից դերը կատարել վիճակված էր Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի նոր պրեզիդենտ, մեծատաղանդ և աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համազասպի Համբարձումյանին:

Նա ամենրից պահանջում էր հոգ տանել գիտության նորագույն ուղղությունների դարգադման նկատմամբ և հետամուտ լինել գիտության կարևորագույն խնդիրների մշակմանը, լինել նորարար, հաղորդակից լինել համաշխարհային գիտության ալսորվա խնդիրներին և գիտահետազոտական աշխատանքները կատարել բարձր մակարդակով, դուրս դալ ժամանակակից գիտության արև ասպարեզը:

Ընտոծելով հիմնարար գիտությունների հեռանկարային գերն ու նշանակությունը, Վ. Համբարձումյանը հոգ էր տանում նրանց զարգացման մասին. միաժամանակ ճիգ ու ջանք չէր խնայում գիտության զարգացումը նպատակամոռու մեր հանրապետության սոցիալական, տնտեսական և մշակութային խնդիրներին լուծմանը:

Վիկտոր Համբարձումյանը մշտապես եղել է իր ժողովրդի հետ կապված բախտորոշ իրադարձությունների կենտրոնում: Նա, ով տեղյակ է նրա հարցապնդումներին ամենարարձր ատյաններում, Ղարաբաղյան մեծ շարժման ընթացքում նրա բռնած սկզբունքային դիրքորոշմանը՝ ընդհուպ մինչև անձնվիր հացաղուր, չի կարող հարգանքով չլցվել նրա հայրենասիրական ոգու նկատմամբ:

Անապի ու ծավալուն է այսօրվա գիտությունը, մեծ ու բազմազան՝ նրա առջև ծառայած պրոբլեմները, ավելի վիթխարի են դժվարությունները և լուծում պահանջող խնդիրները:

Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի օրինակը կօգնի մեզ Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի բարեհաջող գործունեությունն ապահովելու, գիտության նվաճումները հայ ժողովրդի շահերին առավել արդյունավետ ծառայեցնելու գործում: